ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
6 ապրիլի 2017 թվականի N 46-Ա

«ՍՅՈՒՆԻՔ» ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՍՈՒԲՍԻԴԻԱ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետի «բ» ենթակետի և 1.19 կետի «ա» ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 08 բաժնի 02 խմբի 05 դասի 04 «Մշակութային միջոցառումների իրականացում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին» հոդվածը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սյունիք» մարզամշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով 800 000 (ութ հարյուր հազար) դրամ տրամադրել Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը, նրա հետ կնքելով հանձնարարության պայմանագիր:
2. Հաստատել «Սյունիք» մարզամշակութային միջոցառման կազմակերպման և անցկացման կազմակերպական կոմիտեի կազմը ու ծախսերի նախահաշիվը՝ համաձայն N1 և N2 հավելվածների:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

2017թ. ապրիլի 6
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ ապրիլի 6-ի
N 46 - Ա որոշման

ԿԱԶՄԿՈՄԻՏԵ

<<Սյունիք>> մարզամշակութային միջոցառման

1. Վ.Հակոբյան	ՀՀ Սյունիքի մարզպետ, / նախագահ/
2. Մ.Գասպարյան	ՀՀ Սյունիքի մարզպետի խորհրդական /տեղակալ/
3. Ա.Գրիգորյան	ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական
4. Ս.Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ
5. Հ. Ալեքսանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
6. Ս.Ավետիսյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ
7. Ս. Դավթյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության,մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ
8. Հ.Հարությունյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ
9. Ա.Շահնազարյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի առողջապահության և սոցիալական վարչության սոցիալական ապահովության բաժնի պետ
10 .Ա.Ոսկանյան	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ
11. Վ. Արզումանյան	<<Կապանի մշակույթի կենտրոն>> ՊՈԱԿ-ի տնօրեն

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2017թ ապրիլ 6 -ի
N 46 - Ա որոշման

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ

<< Սյունիք >> մարզամշակութային միջոցառման

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազ.դրամ/
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239.00	800.0
	Ընդամենը		800.0

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավար՝ Ռ.Սարգսյան